



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15510

352(56)
Z-99

1873

ՀՐԱՀԱՆԳ

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՅ ԵՒ ԳՈՒՌԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ
ԸՆԴ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ՎԱՆԵՐԱՏԵԱՒ

Ի ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲՈՒԿԱՆ

ԽՈՌՆ ԺՈՂՈՎՈՑ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ց. ՄԻԻՀԷՆՏԻՍԵԱՆ

1873

352(56)
Հ-99

2010

352(56)

2-99

48

5

ՀՐԱՀԱՆԳ

Printed in Turkey

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ

ՍՈՍՈՆՈՒԿՈՅ ԵՒ ԳՈՒՍՏԱՆԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՆ
ԸՆԴ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

ՎԱԿԵՐԱՑԵԱԼ

Ի ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲՈՎԱՆ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՈՑ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԽՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Յ. ՄԻԻԷՆՏԻՍԻԱՆ

1873

ՀՐԱՆԱԿ

ՀԱՅ ԳՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԱՅ ԳՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



66
39

2 0 0 1

Հ Ր Ա Ն Ա Ն Գ

Printed in Turkey

Յ Ա Ր Ա Բ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ԵՒ ԳԱԽՈՒԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ

ԸՆԴ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ



Առաջնորդներն իբրև հոգևոր հովիւ և տեսուչ պարտիք ունին իրենց ժողովրդեան . այս պարտիքը կը բարոզեն արգէն Սուրբ գիրք և մասնաւորաբար Սուրբ Աւետարանը . Հայրապետաց գրութիւնները և մասնաւորաբար Շնորհաււոյն Ընդհանրականը : Հարկ չի կայ այժմ այս մասին վրայ խօսիլ :

Առաջնորդներն իբրև ազգային պաշտօնեայ և Նախագահ Գաւառական Վարչութեան՝ պարտիք ունին իրենց ժողովրդեան . այս պարտիքը կը ցուցնեն Սահմանադրութիւնը և մասնաւորաբար վերջին անգամ գաւառաց համար հրատարակեալ Սահմանադրական Հրահանգը : Այս մասին Առաջնորդաց գործակից են Գաւառական Վարչութիւնը . որոնց պաշտօնն ու պարտիքը՝ գծուած է յիշեալ Հրահանգին մէջ . և հարկ չի կայ այժմ ևս խօսիլ :

Առաջնորդք իրենց հոգևոր և ազգային պաշտօններէն զառ , ունին նաև տեղական կառավարութեանց հետ յարաբերութեան պաշտօն . ահա՛ այս կարեւոր պաշտօնին վրայ պիտի խօսին ներկայ Հրահանգս :

Ա.

Ինչպէս վերն ըսինք , Առաջնորդք՝ ընդ նոսին և Գաւառական Վարչութիւնք իրենց հոգևոր և ազգային պաշտ

տօնէն զատ տեղական կառավարութեանց հետ յարաբե-
րութեան պաշտօն ալ ունին . և այս պաշտօնին համար է որ
Բ. Դուռը Առաջնորդաց ընտրութիւնը յատուկ Յէրմանով
կը հաստատէ . որ կը նշանակէ թէ նոյն գաւառին ազգայնոց
պաշտօնական ներկայացուցիչն է տեղական կառավարու-
թեան բով , և տեղական կառավարութեան և գաւառին
ազգայնոց մէջ յարաբերութեան միջնորդն է . ինչպէս է Կ-
Պօլսոյ Ս. Պատրիարքը բոլոր Թուրքիաքանակ ազգայնոց հա-
մար Բ. Դրան հետ :

Ասոր համար բոլոր Թուրքիոյ գաւառաց մէջ գտնուող
Առաջնորդք և տեսչութեան պաշտօն վարող ու է եկեղեց-
ցականընաւ իրաւունք չունին Բ. Դրան հետ ուղղակի բա-
նակցելու կամ յարաբերութիւն հաստատելու . ինչպէս նաև
իրենց վիլայէթէն դուրս ուրիշ տեղական կառավարութեանց
հետ : Այլ երբ Բ. Դրան գիմելու հարկին մէջ գտնուին ,
պարտական են ՚ի Պատրիարքարան գիմել . նոյնպէս ուրիշ
վիլայէթի տեղական կառավարութեան գիմելու հարկին
մէջ , նոյն վիլայէթի Առաջնորդին գիմել , և անոր միջնոր-
դութեամբը գործել : Իսկ եթէ Առաջնորդ մը վիլայէթի մը
Միւթէսարքութեան կամ Գայմազամութեան և այլն
ներքև գտնուի , պարտական է յարաբերութիւն ունենալ
իր վալիին հետ , միանգամայն վիլայէթի Առաջնորդին ծա-
նուցանել իր խնդիրը :

Ասկէ կը հեռու թէ Առաջնորդ մը բնականաբար պար-
տական է ուրիշ Առաջնորդի մը կողմէն եղած յանձնա-
բարութիւնը սիրով կատարել , և զանցառութիւն չընել :

Բ.

Միայն բարեխնամ կառավարութեանց Առաջնորդաց
հաստատութիւնը չէ որ անոնց յարաբերութեան պաշտօն
ունենալը կ'ապացուցանէ , այլ և Տիւսթուրը՝ որ բարե-
խնամ կառավարութեան օրինադիրքն է :

Վիլայէթ նիզամնամէսին յայտնի ապացոյց մ'է , որ կը
տրամադրէ թէ հպատակ ազգաց հոգևոր գլուխները (Բէիտի

Բուհանի) պաշտօն ունին Միւթէսարքութեան և Գայմազ
գամութեան և մինչև իսկ Միւսիւրութեան իտարէ Մէճ-
լիսներուն մէջ բազմելու :

Երբ Առաջնորդ մը զրկուած է այս արտօնութենէն ,
զայն ստանալու համար նախ թէ ուղղակի և թէ անուղ-
ղակի միջոցներով բանակցելու է տեղական կառավարու-
թեան գլխաւոր և երկրորդական պաշտօնէից հետ : Հարկ
չի կայ բացատրել թէ այս բանակցութիւնն որչափ քաղա-
քավարական և քաղցր լինելու է . իրաւունք մը պաշտպա-
նելը սրբազան պարտաւորութիւն մը կատարել է . բայց
այդ իրաւունքը պահանջելու կերպն ալ գիտնալ և ըստ այնմ
վարուիլ պէտք է :

Առաջնորդի մը պարտաւորութիւնն է տեղական
կառավարութեան հետ համաձայնելու և անոր միջոցաւ
գործ մը կարգադրելու համար ամէն հնարաւոր եղա-
նակներն ՚ի գործ գնելէ ետքը , գիմել կեդր. վարչու-
թեան : Բայց շատ անգամ խնդրոյ մը վրայ է թէ խոտոցած
ալ ըլլայ տեղական կառավարութիւնը , ժամանակով և
այլ միջոցով կարելի է ամսքել անոր սիրտը , և զլջուցա-
նել ՚ի խնդիր իւր :

Կրնայ ըլլալ որ Առաջնորդ մը յանակնկալը կամ յա-
կամայից խնդրոյ մը վրայ նեղանայ . այս պարագային
մէջ ալ խոհեմութիւն գործածելու և միջոց շահելու
մտադիր ըլլալ պէտք է , և ոչ թէ կընճառտել կամ դըժ-
ուարացնել խնդիրը :

Հարկ չի կայ ըսել թէ Առաջնորդը ըստ տեսակի
խնդրոց՝ կամ կրօն . ժողովոյ և կամ Բաղ . ժողովոյ և կամ
երկուքին խորհրդակցութեամբը պիտի գործէ . և այս ա-
մէնը ճշդութեամբ և ամենայն խնամով պիտի տեղե-
կագրէ հետզհետէ ամէն թղթատարով ՚ի Պատրիար-
քարան :

Եթէ գաւառին մէջ ուրիշ հպատակ ազգք կան , որոնց
Առաջնորդները կը բազմին Մէճլիսին մէջ , ան առեն մերայ-
նոց պահանջումը կաւելի կը գիւրանայ :

Իսկ եթէ ուրիշ հպատակ ազգաց Առաջնորդներն ալ այդ իրաւունքը վայելելէ զրկեալ են, պէտք է տեսակցիլ անոնց հետ, համաձայնիլ և միաբանութեամբ խնդրամատոյց լինիլ:

Հոս ալ արժան կը համարինք յիշատակել թէ, Օսմանեան Տէրութեան ուրիշ հպատակ ազգաց Առաջնորդաց հետ քաղաքավարական տեսակցութիւններ և բաւնակցութիւններ կրնան ըլլալ, երբ անոնց կողմանէ ալ միևնոյն պատրաստականութիւնը տեսնուի:

Այսպէս նաև պաշտօնական այցելութիւններ ալ կրնան տեղի ունենալ, երբ պատշաճ դատուի, միշտ ազգային արժանապատուութեան նախանձախնդիր լինելով, և պատշաճից օրէնքը յարգելով:

Գ.

Միայն Առաջնորդք չեն որ իրաւունք ունին կառավարութեան ժողովոյ մէջ բազմելու, այլ և աշխարհական անդամակիցք ալ կան այլ և այլ ժողովոց մէջ, ինչպէս են Գայմադամութեան, Միւթիսարըֆութեան և Վիլայէթի Խոտարէ, Տասփի և Թէմեիզի Հուգուզ և Ճինայէթի ժողովները, ասոնց ընտրութեան ատեն իւրաքանչիւր ազգէ ընտրելիներ կ'ուզուին: Այդ ընտրելիները Գաւառական Վարչութիւնը պիտի ներկայացնեն, և ընտրելեաց անկեղծութեանը և հաւատարմութեանը վրայ վստահ ըլլալու են, և ընտրելեաց մէջ նուազ վստահելի անձ ըլլալու չեն: Իսկ Գիւլիստան և Գիւլիստանի ընտրողք, և Թերեւս այն նուազ վստահելի անձ անցնի, և վստահար լինի գաւառին: Այս պատճառաւ ընտրութեան ատեն մեծ հոգ և զգուշութիւն բանեցնելու է, որ յետոյ չ'ափոտան:

Ժողովականի մը պարտքը արդարութիւնն ու ճշմարտութիւնը սիրելն է, ուստի այս ուղիւ ճանապարհէն խոտարելու չեն ամեն պարտաւրացի մէջ, այս ընելով մարդկութեան և քրիստոնէութեան պարտքը կատարած կ'ըլլայ:

Բայց ժողովական մը երբ տեսնէ որ արդարութիւնը և ճշմարտութիւնը ոտնակոխ կ'ըլլան, բողոքելու՝ և զգուշանալու է իր կնիքը և ստորագրութիւնը դնելէ այնպիսի Մաղպաթայի վրայ:

Արդէն Գաւառական Հրահանգին մէջ ծանուցեալ է թէ կառավարութեան ժողովոց Հայ անդամները պարտաւոր են ժողովոց մէջ յուղեալ ազգային հանրական կամ անհատական խնդրոց վրայ իրենց կարծիքը տալէ յառաջ՝ Ազգ. Գաւառական Վարչութեան կամքն ու կարծիքն առնուլ:

Արդարութեան և ճշմարտութեան դէմ չի դործելու՝ համար իր ստորագրութիւնը զլացող ժողովականը, իւր Գաւառական Վարչութեան հաղորդելու է: Ասանկ պարագայի մէջ՝ երբ խնդիրն ազգային ընդհանուր է, կամ ազգային անհատի կը վերաբերի՝ որ կարևոր է և ծանրակշիռ, Առաջնորդն իր Գաւառական Վարչութեան հետ համախորհուրդ պաշտօնական կամ անպաշտօն միջոցներու կը ձեռնարկեն, երբ հարկը պահանջէ՝ կը բողոքեն, երբ բողոքնին անլսելի ըլլայ՝ կ'երկրորդեն բողոքնին, և մէկ օրինակ մ'ալ տեղւոյն Վալիին կը դրկեն, երբ դարձեալ անլսելի ըլլայ՝ կ'երրորդեն, և սոյն բողոքաբոց օրինակները կը ներկայացնեն կեդր. Վարչութեան, որ 'ի հարկին Բ. Գրան ուշադրութեանը ներկայացնէ:

Երբ Առաջնորդք բողոք ունենան, եթէ խնդիրը ծանրակշիռ է՝ առէկ կ'ընեն որ կանխաւ կեդր. Վարչութեան ներկայացնեն, անոր դիտողութիւնն ալ՝ եթէ ունի, ստանալու համար:

Իսկ ընդհակառակն, եթէ պատահի որ ժողովական Հայը անտարբեր կեցած է իր պաշտօնին ու պարտաւորութեանը, և անիրաւ վճռագրոյ ներքե և ստորագրութիւնը դրած է, որ կը վերաբերի ազգային հանրական խնդրոց, կամ անհատական բայց կարեւոր խնդրոց: Առաջնորդ և Գաւառական Վարչութիւն միաբան բողոքելու են նոյն ժողովականին և անոր ստորագրութեանը դէմ, և 'ի հարկին դատ պահանջելու են, միանգամայն ծանուցանելու են կեդր. Վարչութեան:

Գ.

Առաջնորդն իր Գաւառական Վարչութեան գործակցութեամբը առանց ժողովական ըլլալու ալ, յարաբերութիւն ունի տեղական կառավարութեան հետ :

Առաջնորդն իր գաւառին ազգային և կրօնական գործոց և խնդրոց համար, ինչպէս են եկեղեցւոց, վանօրէից, կառածոց, գարոցի և այլ հանրական գործք և խնդիրք, տեղական կառավարութեան հետ յարաբերութիւն ունի : Բայց միայն այսչափ չէ :

Յայննի է որ բարեխնամ կառավարութիւնը կենաց, ընչից և պատուոց ապահովութիւնը Թանգիմարի միջոցաւ հրատարակած է, և կը բազմայ որ այդ ապահովութիւնը իր ամէն կարգի հոլատակք անխտիր վայելեն :

Աստի այն իրաւամբ որ ՚ի վաղուց հետե ճանչցուած է և մինչև ցարդ ընդունուած, ըստ որում Առաջնորդը միջնորդն է տեղական կառավարութեան և Ազգին մէջ, բարեխնամ կառավարութեան Թանգիմարի և այլ օրինաց հակառակ պատահած եղելութեանց վրայ պարտաւոր է Թագրիբ գրել, և ծանուցանել տեղական կառավարութեան :

Երբ տեղական կառավարութենէն դարման չի տեսնուի, կրկնելէ և երեքինելէ վերջը, անգործադրելի մնալուն պատճառն ալ հետազօտելով, կը ներկայացնէ վալիին, և կը տեղեկագրէ կեդր. Վարչութեան :

Բայց գիտնալու են Առաջնորդը և Գաւառական Վարչութիւնը, որ պաշտարանել ուղած դատերնին շատ լաւ քննելն և ստուգելն ետքը պիտի դիմեն տեղական կառավարութեան կամ կեդր. Վարչութեան : Ի հարկին կեդր. Վարչութիւնը քննութիւն պիտի խնդրէ բարեխնամ կառավարութենէն, և եթէ սխալ տեղեկութիւն հաղորդուած ըլլայ, կամ չի կրնան իրենց դատը պաշտպանել, Առաջնորդ կամ Գաւառական Վարչութիւն պաշտօնէ պիտի դադրին անմիջապէս :

Առաջնորդը և Գաւառական Վարչութիւնը զգուշանալ

լու են անխորհրդաբար և մէկէն ՚ի մէկ խնդրոց մէջ նետուելէ : Զգուշանալու են չափազանց լեզու գործածելէ և չափազանց միջոցներու դիմելէ . պատշաճից օրէնքը ՚ի միտ ածելու են :



Մասնական բաներու համար մասնական այցելութիւնք միայն դարման են, բայց ոչ պաշտօնական կերպով :

Վերջապէս հարստահարութեանց՝ կառավարական պաշտօնէից անհոգութեանց և այլ զեղծմանց դէմ դանդաղութիւն, և արդարութեան ու օրինաց գործադրութիւնը պահանջելու մասին հոգ տանելու է : Այսպէս են նաև ազգային հանրական իրաւունքները, սեփականութեան, ստացուածքի, պատուոց, նոյնպէս և անհատի մը վերաբերեալ այս տեսակ խնդիրները, երբ անիրաւութեան մը զոհ երթալու վրայ ըլլալով, ամբողջ ընտանիք մը կորստեան վիճակի մէջ ըլլայ :

Իւրաքանչիւր առաջնորդական վիճակի մէջ Գաւառքէ հետսի պաշտօնէայն Առաջնորդին և Գաւառական Վարչութեան Թագրիբները կը ներկայացնէ տեղական կառավարութեան, և անոր բանիւ բերանոց հրամանները կը հաղորդէ Առաջնորդին և Գաւառական Վարչութեան, և փոխադարձաբար Վարչութեան դիտողութիւնները կը հաղորդէ կառավարութեան : Առաջնորդին անձամբ կատարելիք բանակցութեանց ներկայ պիտի գտնուի Գաւառքէ հետսին :

Թագրիբներու շարադրութեան և ուժին ուշադիր ըլլալու է. Թուրքերէն գրութեանց մանաւանդ պաշտօնական գրութեանց հմուտ և ձեռնհաս անձանց պէտք է որ խմբագրել տրուին Թագրիբները . զի այլ է անպաշտօն և սոսկական անձի մը տուած բողոքագիրը, և այլ է կառավարութեան և Առաջնորդաց մէջ եղած գրաւոր բանակցութիւնը :







2013

« Ազգային գրադարան



NL0048504

